ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՌԵՎՏՐԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրի հարկի մասին» 2002 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-207 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին կետում «միջոցով վաճառք» բառերը փոխարինել «, դեղատների, դեղատնային կրպակների միջոցով առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն» բառերով:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Առևտրի հարկ վճարողները ընթացիկ տարվա յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար որոշվող հարկվող օբյեկտի նկատմամբ հարկը հաշվարկում են 3 տոկոս դրույքաչափով:»,

2) 1.1-ին մասի՝

ա. առաջին նախադասությունից հանել «հարկվող օբյեկտի մասով» բառերը, իսկ «2021 թվականի հունվարի 1-ից մեկ տոկոսը կազմող գումարի չափով, իսկ 2022 թվականի հունվարի 1-ից՝ երկու տոկոսը կազմող գումարի չափով» բառերը փոխարինել «2 տոկոսը կազմող գումարի չափով՝ խանութների, կրպակների (տաղավարների), պահեստների միջոցով առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ձևավորվող հարկվող օբյեկտի մասով, 1 տոկոսը կազմող գումարի չափով՝ դեղատների, դեղատնային կրպակների միջոցով առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ձևավորվող հարկվող օբյեկտի մասով» բառերով,

բ. երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Եթե սույն մասով սահմանված նվազեցումներից հետո առևտրի հարկի գումարը կազմում է խանութների, կրպակների (տաղավարների), պահեստների միջոցով առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ձևավորվող հարկվող օբյեկտի 1 տոկոսից պակաս գումար, իսկ դեղատների, դեղատնային կրպակների

միջոցով առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ձևավորվող հարկվող օբյեկտի 2 տոկոսից պակաս գումար, ապա ապրանքներ ձեռք բերելու ծախսերի գծով նվազեցումը կատարվում է այն չափով, որ առևտրի հարկի գումարը կազմի խանութների, կրպակների (տաղավարների), պահեստների միջոցով առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ձևավորվող հարկվող օբյեկտի 1 տոկոսը, իսկ դեղատների, դեղատնային կրպակների միջոցով առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ձևավորվող հարկվող օբյեկտի 2 տոկոսը:»,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մաս.

«5. Խանութների, կրպակների (տաղավարների), պահեստների և դեղատների, դեղատնային կրպակների միջոցով առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունների մասով առևտրի հարկի հաշվարկման նպատակով իրականացվում է ապրանքների առանձնացված հաշվառում:»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մաս.

«5. Սույն հոդվածի 2^1-ին և 2^2-րդ մասերով սահմանված դրույթները չեն տարածվում դեղերի վաճառք իրականացնող առևտրի հարկ վճարողների վրա՝ գործունեության այդ մասով:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Դեղատների և դեղատնային կրպակների միջոցով առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված հայտարարագիրը առաջին անգամ իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022 թվականի հուլիսի 20-ը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**